

ՏԻԿԻՆ ԲԱՄԱՐ ՆԵՐՍԻՍԵԱՆ

(ԾՆՆԴԵԱՄԲ ԱԴԱՄԵԱՆ)

Մ. ԱՍԻԼԵԱՆԻ

1882 թւականի Պետերբուրգի աշնան օրերից մէկն էր. ուսանող ընկերներին մէկը եկաւ ինձ մօտ և չափենց, որ նոյն օրը, երեկոյեան ժամի 6-ին, իւր անուանակոչութեան առթիւ հրաւէր ունի. իմ ուսանող ընկերս ապրում էր Գարօթիօվանա փողոցի վերայ, իսկ ես ապրում էի Վասիլևսկի կղզու վերայ. հետաւորութեան պատճառով և մասամբ ուսանողներին չատուկ անձղութեամբ, ես չը կարողացայ նշանակեալ ժամին ներկայ գտնուիլ. վերջապէս ժամի 8-ին հաղիւ հասաւ ընկերոջս բնակած տունը. ներս մտնելով նորա սենեակը, ծխախոտի ծխի ամպի միջից լապտերի աղօտ լուսով չը կարողացայ ներկայ եղողներին իսկոյն ճանաչել. միայն լսում էի բազմաթիւ ձայներ և տեսնում ծառացած ծխի միջից կերպարանքների փոխանակ մարդկային սիլուէտներ. ներկայ եղողներն աչնպէս զբաղած էին խօսակցութեամբ, որ կարծես չը նկատեցին իմ ներս մտնելը. Ընդհանուր ողջունից ցատոյ, սենեակի մէկ ծալքում, դրան մօտ, հաղիւ կարողացայ մէկ տեղ գտնել և նստել. խօսակցութիւնը տաք տաք շարունակում էր ուսանողների մէջ. —Ո՛հ, աչնպէս չէ, լսում էին երբեմն աչ և աչ կողմից ձայներ. ես կ'ապացուցանեմ, աղաղակում էր մէկ ուրիշը, որ իւրաքանչիւր ազգ նախ քան տնտեսապէս բարւոյն իւր վիճակը՝ նա մտաւորապէս պէտք է առաջադիմէ. աչ կարծիքը սխալ է, խօսում էր երրորդը. մէկ ազգի տնտեսական, մտաւոր և բարոյական առաջադիմութիւնը պէտք է լինի զուգընթացաբար միմեանցից անբաժան... Սրբեմն երբեմն լսում էր վիճաբանողների ձայների միջից մէկ մեղմ կանացի ձայն. ինչ և իցէ. ես ուշադրութիւնս լարած սկսաւ լսել կանացի ձայնը. որքան սովորած էի ուսանողների տաք տաք վիճաբանութեանց, նոյնքան մնացել էի զարմացած՝ լսելով մէկ հալ օրիորդի հանգարտ առողջամիտ դատողութիւնները, մանաւանդ մաքուր հալերէն լեզուով. ինչպէս ասացի, միայն լսում էի ձայներ, բայց ծխի թանձրութիւնից ներկայ եղողների կերպարանքը չէի կարողա-նում որոշել. հետզհետէ աչքերս ընտելացան ծխին և սկսաւ տեսնել սենեակում եղողների կերպարանքը և որոշել օրիորդի կերպարանքը, որը իւր մեղմ ձայնով դիւթել էր լսելիքս. Դա՛ թխազոյն համակրելի երեսով, սև-սև մեծ աչերով, կամարաձև լծերով, միջահասակ, ըստ երևութին 19—20 տարեկան օրիորդ էր. նորա նստածքը, նաչելի չարժածքը, նախածքը չիչեցնում էին ինձ Հալաստանի օրիորդի համեստութիւնը՝ միայն համեմա-ծ կրթած մարդուն վալել վե՛հ համարձակութեամբ. Դառնալով դէպի կողքին նստած ուսանողը՝ հարցրի նորան աչ օրիորդի ո՞վ լինելը.—Դա Բեռ-

տուժելակի կուրսերի ուսանող է, անունն է Թամար, աղգանունը Աղաման, պատասխանեց ինձ ուսանողը, ջալը ներս բերեցին, տաք տաք խօսակցութիւնները ընդմիջեցաւ Ալէմիջոցին ծանօթացաւ օր. Թամարի հետ:

Ո՛վ էր այդ մատաղահաս օրիորդ Թամարը և ինչ էր որոնում հիւսիսի սառնամանիքում: Դա տիխիսեցի լալտնի ծնողների զաւակ էր. իւր հալկական կրթութիւնը ստացել էր Գալիանեան օրիորդաց դպրոցում: Աւարտելով այդ դպրոցի դասընթացը՝ մտել էր գիմնազիա և այդ տեղ ևս աւարտելով ութնորդ դասարանը, կամեցել էր բարձրագոյն ուսում ստանալ՝ ընդդէմ իւր ծնողաց կամքին, ի զարմանս Տիխիսի հաւ օրիորդների, մերժելով հարուստ փեսացուների ձեռքը, լսելով իւր ներքին լաւագոյն ձայնին՝ եկել էր հիւսիս, որպէս սիրահար գաղափարների և գիտութեան:

Ջարմանալի էր այդ մատաղահաս օրիորդի եռանդը և ընդունակութիւնները. սակաւ ժամանակի մէջ նա ծանօթացաւ համարեւն Պետերբուրգի բոլոր հալ ուսանողների հետ, տեղեկացաւ ոչ միայն նոցա, այլ և ուսւ և վրացի ուսանողների գաղափարներին, թէև նա արդէն բերել էր իւր հետ հիւսիս պատրաստի որոշեալ գաղափարներ. նա ուսումնասիրեց Պետերբուրգի հալ ուսանողութիւնը. նորա հոգին վրդովում էր շատ ուսանողների անասարբերութիւնը, առանց խտրութեան նա դիմում էր այս և այն ուսանողին, չորդորում նոցա՝ միանալ մէկ որոշեալ գաղափարի ներքոյ, գործել ընդհանուր ուժով. մանաւանդ թէ այդ ժամանակ Պետերբուրգի հալ ուսանողները բաժանւած էին երեք կուսակցութեան: Գրական ժողովի անդամներին հակառակ էին այն հալ ուսանողները, որոնք չիմանալով հայերէն լեզուն, չունենալով հալկական կրթութիւն, մէկ տեսակ արհամարհանօք էին խօսում այդ՝ իրենց կարծիքով սահմանափակ մտաւոր չրջան ունեցող հալ ուսանողների մասին, իրենց համաշխարհաքաղաքացի համարելով (ի զէպ. այդ համաշխարհաքաղաքացի ուսանողներից շատերը ալժմ ոչ միայն չեն մտածում ընդհանուր մարդկութեան վերալ, այլ նոցանից իւրաքանչիւրը մէկ տաք տեղ գտած, լոկ մտածում է իրեն գրպանի վերալ կամ բեղերը սրած, նոր տարադի մաքուր հագուստով, գլխի արտաքին կողմն օժած հոտաւէտ իւրերով, իսկ ներքին կողմը դատարկ՝ հարուստ օժիտով հալ օրիորդ հարսնացուներ են փնտռում). իսկ հալ ուսանողների մէկ մասն իւր ժամանակն անցնում էր դատարկութեամբ. օրիորդ Թամարը դոցանից շատերի սրտերի մէջ վառեց գաղափարական հուրը իրեն չատուկ կանացի ոգևորութեամբ: Ամեն հալ ուսանողի բերանից օրիորդ Թամարի նունն էր լսում. նորա շնորհիւ մինչև այդ ժամանակ միմեանց իզուր ատող ուսանողներից շատերը միացան. սկսաւ ծանօթութեան ընդարձակ չրջան. մանաւանդ օրիորդ Թամարի ոգևորիչ բարոյական ազդեցութիւնը շատ հալ ուսանողների համար զգալի էր և հէնց այն պատճառով, որ մէկ հալ օրիորդ կենդանի օրինակով ցուց էր տալիս, թէ ամօթ է հալ ուսանողին անտարւ երութեան մէջ թմրել, փակել աչքերը, չը տեսնել իւր ժողովրդի թշա-

ուսթիւնները: Գաղափարը և գաղափարական ձգտումները ըստ ինքեան անարատ, ազնիւ հոգիների համար ունին իրանց բարոյական կրթիչ ազդեցութիւնը, ևս սուսանել նոցա ազդեցութիւնը զգալի է, երբ նոքա բղխում և քարոզում են կանացի մաքուր սրտից. ալիպէս էր շատ ուսանողների համար օրիորդ Թամարի կենդանի խօսքը և օրինակը:

Նորա պարզ հագուստը, խօսակցութեան անկեղծութիւնը, բարոյական մաքրութիւնը, գաղափարների խորութիւնը դէպի ինքն էին դրաւում ծանօթների սիրտը և հոգին: Արտաքին փալլը, կեղծութիւնը բոլորովին հեռի էր նորանից. ուսս ուսանող կանանց արտաքին կեղծ նշաններից ոչ մէկը չէր նկատում նորա վերայ. այդ մասին նա շարունակ ասում էր. «Գաղափարի վեհութիւնը և մաքրութիւնը ոչ մի ժամանակ կարօտութիւն չունի փալլել արտաքին ցոլցերով. գաղափարական ցուցամուտքիւնը չուսով կ'անցնի, երբ կանանց սիրտն ու միտքը կրթւելով և զարգանալով կը հասկանան թէ նոցա արժանաւորութիւնը ոչ թէ նորանումն է կալանում, որ նոքա նմանին արտաքին կողմից ալ մարդոց, ալ մարդկային ներքին արժանաւորութեան մէջ»: Ալիպէս էին նորա համոզմունքները և նոցա հաւատարիմ մնաց մինչև իւր վաղահաս մահը:

Օրիորդ Թամարը ունեցաւ ազդեցութիւն և Պետերբուրգի օտարախօս ուսանող հաշ օրիորդների վերայ, որոնք թւով 7 էին. նոքա նորա լորդորմամբ սկսան հետաքրքրուել և ուսանել հայոց լեզու: Թամարի ազդեցութիւնը ակնյալանի երևում էր ալ օտարախօս աղջկանց վրայ. դոքա մէկ տեսակ համակրութեամբ և պատկառանք էին վերաբերում դէպի օրիորդ Թամարը: Ալիպէս օրիորդ Թամարը պաշտօն աստղի նման փալլեց մէկ տարի Պետերբուրգի հաշ ուսանողութեան հորիզոնի վերայ՝ լեղափոխելով նոցանից շատերի սիրտը դէպի բարին, անցաւ լեւոյ Մօսկւա 1883 թւին, նոյն բարոյական ազդեցութիւնը և բարի համբաւը թողնելու և ալնտեղի հաշ ուսանողութեան համար:

Մօսկւայում ևս մէկ տարի մնալով, ամուսնանում է մէկ համեստ և իրեն գաղափարակից ուսանող Գաւիթ Ներսիսեանի հետ, յուսալով ձեռք ձեռքի տւած իրազործելու կեանքի մէջ իրենց փալլալած գաղափարները. 1884 թւից տիկին Ներսիսեանն ուղք է դնում գաղափարական աշխարհից դէպի իսկական կեանքը, որտեղ սպասում էր նորան անվաղողութիւններ և տառապանք:

Սարսափելի է ալ մարդու դրութիւնը, որ որոշեալ բարոյական ըսկըզբունքներով և գաղափարներով մոնում է կեանք և լամառութեամբ կամենում է իրազործել նոցա. մանաւանդ անտանելի է ալիպիսի մարդու դրութիւնը մեր հասարակութեան մէջ. Գաղափարը ինքն ըստ ինքեան մէկ հուր է, որ լափում, մաշում է իւր հաւատարիմ ղինւորի գոլութիւնը. բալց և ակիլի զարհուրելի է, երբ գաղափարական մարդը զուրկ է մեր մէջ նիւթական միջոցներից: Մախող ներքին հուրը մէկ կողմից, կենսական անո-

դուք հանդամանքները միւս կողմից շատ անգամ խեղդում են իրենց ճանկերի մէջ գաղափարական մարդուն և գերեզման իջեցնում: Այդպիսի մէկ զոր է լինում տիկին Թամար Ներսիսեանը: Մեր մէջ լաւագոյն հասարակական գործունէութիւններից մէկն է հաշւում ուսուցչութիւնը. այդ իսկ պատճառով 1884 թւին տիկին Ներսիսեանը վարժուհու պաշտօնով գնում է Սղեմիս. դժբաղդաբար մի քանի ամսից, որդեծնութիւնից լիտու ծանր հիւանդացած, վերադառնում է Տփլիս՝ զուրկ բոլորովին նիւթական միջոցներից: 1885 թւին աւարտում է նորա ամուսին Ներսիսեանը Մօսկաւի Պետրովսկան երկրագործական ճեմարանը և դալիս նոյնպէս Տփլիս: Այդ երիտասարդը, որ ունէր հալընական բաւականին ժառանգութիւն և հողեր, լոյս ունէր իւր մասնագիտութեամբ պարապելու իւր սեպական հողերի վերայ, բանալով աղտեղ և ուսումնարան՝ պատահում է արդեմքների:—Նորա մեծ եղբայրը չէ կամենում մաս հանել նորան հալընական ժառանգութիւնից. այդ դէպքը սաստիկ վատ է ազդում երիտասարդ Ներսիսեանի վերայ և վատեցնում. նա կամենում է եղբօր դէմ դատաստան բանալ. մեծ եղբայրը գործը քաշ է տալիս. երիտասարդ Ներսիսեանը կամենում է առ ժամանակ ուսուցչութեամբ պարապել և հրաւիրւում է ուսուցիչ ս. Էջմիածնի ճեմարանում. գնում է Էջմիածին իւր հետ տանելով իւր կնոջը և որդուն: Էջմիածնում տիկին Թամարը լորդորում և համոզում էր իւր ամուսնուն, որ իրենց գործունէութիւնը անլի արդիւնաւէտ կը լինի, եթէ իրենք գործեն ուրիշ կողմերում, որտեղ ինքն ևս կարող է վարժուհութեամբ պարապել. բայց դժբաղդաբար երիտասարդ Ներսիսեանի աչքերը սկսում են ցաւել և նա ստիպւած է լինում ուսումնական տարւայ կիսումը թողնել Էջմիածինը և վերադառնալ ընտանիքով Տփլիս: Այստեղ մինչև 1886 թւի սեպտեմբեր ամիսը ապրելով նիւթական կարօտութեան մէջ, երիտասարդ Ներսիսեանի աչքերը առողջանալուց լիտու, ալը և կին ուսուցչութեան պաշտօնով գնում են Բաքու և բնակւում ուսումնարանի շինութեան մէջ: Դժբաղդութիւնը կարծես նոցա հետեւում էր ամեն տեղ. կէս գիշերին ուսումնարանում նոցա բնակւած տեղը վառարանից հրդեհ է պատահում. երիտասարդ Ներսիսեանը մասամբ իւր ընտանիքին վտանգ պատահելու երկիւղից և մասամբ ցրտից սկսում է արին թքել. քանի գնում օրէց օր թոքախտը սաստկանում է. աչնպէս որ ձմեռ ժամանակ Ներսիսեանները ստիպւած են լինում կրկին թողնել ուսուցչութիւնը և գնալ Շամախու մօտ Գիրք գիւղը, որտեղ, չը նախելով Ներսիսեանի ծանր հիւանդութեանը, դոցա ջանքով բացւում է ուսումնարան: Քանի գնում թոքախտը սաստկանում է և երիտասարդ Ներսիսեանը անկողին է ընկնում: Այստեղ տիկին Թամարը պահապան հրեշտակի պէս գիշեր և ցերեկ հսկում է եղբւ իւր ամուսնու գլխավորները միաջնակ, գիւղական խոնաւ, ցուրտ, առանց տախտակամածի սենեակում, զուրկ համարեա բոլորովին նիւթական միջոցներից, բժշկական օգնութիւնից և դեղերից. այդպիսի թշուառ դրութեան

մէջ վախճանուում է երկրասարդ Ներսիսեանը 1888 թւի լունար ամսի վերջերում:

Կենսական վատ պայմանները, ամուսնու մահւան վիշտը խանգարում են և տիկին Թամարի առողջութիւնը. ամուսնու մահից անմիջապէս լետու, նորա մէջ ևս երևում են թորքախտի նշաններ. ծանօթները նորան բերում են Տփլիսի եղն նիւթական կարօտութեան մէջ. թորքախտը սաստկանալով անկողին է ձգում և տիկին Թամարին: Ջարմանալին այն է, որ չը նպատ իւր ծանր հիւանդութեանը, նիւթական միջոցներից գուրկ լինելուն, տիկին Թամարի բերանից չէ լսել երբեք տրտունջ, ոչ իւր թշառ բաղդի և ոչ մարդկանց վերաբերմամբ. նա ամեն վիշտ տանում էր լուռ և մուշ, ընդ նմին շարունակ հետաքրքրելով ամեն մէկ հասարակական և գրական շարժումով. արդէս համարեա մէկ տարւակ չափ շարունակուում է տիկին Թամարի հիւանդութիւնը և դեկտեմբերի 31-ին լուս 1889 թւի լունար ամսի 1-ը, վախճանուում է 26 տարեկան հասակում, թողնելով իրենից լետու մէկ հինգ տարեկան արու զաւակ: Յուղարկաւորութեան հանդէսը կատարւեցաւ լունարի 4-ին: Հետաքրքիր էր տեսնել թէ ի՞նչքան էին աղ տխուր հանդիսին մասնակցողները.—բազմաթիւ հալ, վրացի կրթած երկրասարդներ, բժիշկներ, իրաւաբաններ, խմբագիրներ, ուսուցիչներ և այլք. կալին քսանի չափ կրթած հալ, ռուս և վրացի տիկիներ, օրիորդներ և վարժուհիներ՝ չը հաշւելով և հանգուցեալի ազգականները և մնացեալ ժողովրդի բազմութիւնը: Դադաղի վերայ կալին 6 պսակ, երկուսը Տփլիսի հալ տիկնանցից և օրիորդներից, երկուսը Տփլիսի հալ երկրասարդութիւնից, մէկը հանգուցեալի ընկեր և ծանօթ ռուս օրիորդներից, իսկ մէկն ևս Բաքւայ հալ երկրասարդութիւնից. դադաղը երկար տեղ իրենց ուսերի վերայ կըրում էին հանդիսին մասնակից տիկիները, օրիորդները և երկրասարդները: Գերեզմանի վերայ մէկ սրտառուչ ճառ խօսեց ուսուցիչ Քրիստափոր Միքայէլեանը, ցոյց տալով տիկին Ներսիսեանի բարոյական նշանակութիւնը երկրասարդութեան համար և նորա մահւամբ կրած մեծ կորուստը: Արդէս վաղաժամ բաժանեցաւ այս աշխարհից տիկին Թամարը, տանելով իւր հետ գերեզման շատերի համակրութիւնը, սէրը և արտասուքը, թողնելով նոցա սրտերի մէջ անմոռաց փշատակ:

(«Մուրճ») ընթերցողները թերևս հարցնեն. ինչ բանի մէջ է կաշառում տիկին Ներսիսեանի արժանաւորութիւնը, նա ոչ նշանաւոր մատենագիր է եղել (թէ և ունի թարգմանութիւններ, երկուսը «Աղբիւր» մանկական ամսագրում տպած, մէկը Գարշինից, իսկ միւսը, եթէ չեմ սխալւում, Բողղանովից, նոյնպէս ձեռագիր չը տպած թարգմանութիւններ), ոչ հրապարակախօս և ոչ բարձրագոյն անուն ունեցող մէկ մարդ: Իրաւ է, նա իւր կարճատև կեանքի մէջ ձախորդ հանգամանքների պատճառով, փշեալ չատկութիւններից և ոչ մէկը չէ ցոյց տալ ակնկալտնի, բայց նա ունեցել է կրթիչ բարոյական մեծ աղղիցութիւն իւր ընդարձակ ծանօթութեան

չըջանում. վկայ են դորան նորա ժամանակակից Պետերբուրգի, Մոսկւայի ուսանողներից շատերը, Տիխիսի և Բաքւայ երիտասարդութիւնը և ալլը: Մեր կեանքի մէջ գաղափարական, բարոյական սկզբունքներով շատ և շատ հազարադիւտ մարդ կարելի է գտնել, մանաւանդ արալիսիները դժւարագիւտ են մեր կրթեալ անուանած կանանց մէջ, որոնք ոչ միայն չեն հետևում վեհ գաղափարների, այլ և շուալութեան և դատարկագորտութեան դատապարտելի օրինակ են լինում. ահա այդ իսկ պատճառով տիկին Ներսիսեանների նմանները մեր գաղափարից զուրկ անապատալին կեանքի մէջ իրենց բարոյական աղղեցութեամբ, կենդանի խօսքով և օրինակով մէկ տեսակ առողջարար և կենդանացուցիչ գովարար հողմ են, որ ներս սղոսկելով մեր կեանքի չուսահատ գաղափարական ճանապարհորդի ներքին կողմը, սկըսում է նորա սիրտը բարախել չուսով, սիրով և աղնիւ ու վեհ ձգտումներով: Այդ կողմից տիկին Ներսիսեանը ներկայանում է իբրև հասարակական գործիչ, որի գործունէութիւնը եղել է ոչ թէ թղթի վերայ, այլ մարդկանց կենդանի սրտերի վերայ, մանաւանդ թէ նա ունէր իւր գործունէութեան որոշ ծրագիրը, ի միջի ալլոց և «այս ժողովրդի մէջ գլտութիւնը տարածել ղիւրամատչելի լեզուով և հասկացողութեամբ», և ինքն սկսել էր այդ ուղղութեամբ թարգմանութիւն անել. բայց մեր կեանքի ձախողը հանգամանքները և մահը, ինչպէս այդ ձեռնարկութեանը, նոյնպէս և նորա բազմաթիւ օգտաւէտ մտադրութեանց տարածամ վերջ դրին: